ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

23.12.2013 19:44

ՀՀ փաստաբանների պալատը և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA CEELI, INC.) հետ համատեղ այսօր՝ դեկտեմբերի 23-ին, կազմակերպել են քննարկում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի որոշ հիմնախնդիրները» թեմայով:

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ նշել է, որ քրեական օրենսգրքի նոր նախագծի հեղինակները փորձել են հնարավորինս լավ օրենք ներկայացնել, սակայն ոլորտի փորձագետները և փաստաբանները թեմայի առնչությամբ ունեն որոշակի անհանգստություններ:

Փաստաբանների պալատի նախագահի հիմնական անհանգստությունը կապված է մասնավորապես մեղադրյալի ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի ներդրման հետ,- ‘**ընդհանրապես մեր փորձագետները գտնում են, որ այս ինստիտուտի ներդրումը հայեցակարգից որոշակի իմաստով շեղում ունի, քանի որ կա կառավարության կողմից ընդունված հայեցակարգ, որը չի նախատեսել մեղադրյալի ցուցմունքի դեպոնացման հնարավորությունը և որպես ցուցմունքի դեպոնացում նախատեսել է, որ, եթե անձը հնարավորություն չունի այդ պահին գտնվել Հայաստանի Հանրապետությունում պետք է ցուցմունքը դեպոնացնել**’: Փաստաբանների պալատի նախագահի խոսքով ցուցմունքի դեպոնացումը ապացույցի ապահովման միջոցներից է:

Արա Զոհրաբյանի կարծիքով՝ Հայաստանում նախաքննությունն իրականացնող մարմինը,-‘**որպես ‘ապացույցների թագուհի’ օգտագործում է ինքնախոստովանական ցուցմունքը: Մենք՝ փաստաբաներս, ընդդիմանում ենք այդ մոտեցմանը, որովհետև քաղաքացին վախի ազդեցության տակ ոչ միայն կարող է սուտ ցուցմունք տալ, այլ նաև հարազատի մեղադրանքը դիտավորյալ կերպով ժաժկել:**’

Քննարկման ընթացքում փորձագետ-փաստաբաններ Մելանյա Առուստամյանը, Ինեսսա Պետրոսյանը, Նիկոլայ Բաղդասարյանը և ոլորտի փորձագետ Արթուր Ղամբարյանը ներկայացրել են փորձագիտական կարծիքներ ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի նոր նախագծի վերաբերյալ:

Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանը՝ խոսելով օրենքի նախագծի մասին, մասնավորապես նշել է, որ այն չի ապահովում մարդու, նրա իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, չի սահմանափակում պետական մարմինների՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների, ազատությունների և օրինական շահերի նկատմամբ ոտնձգությունները, և չի ամրագրում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները:

Քննարկման ավարտին մասնակիցները որոշել են հավաքագրել բոլոր առաջարկությունները և Փաստաբանների պալատի խորհրդի նիստին ներկայացնել, որից հետո փաստաբանները կհայտնեն միասնական դիրքորոշում:

Նախորդ նորությունը: ԱՐՄԵՆ ԵՍԱՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ՌՈՒՄԻՆԻԱ

Հաջորդ նորությունը: ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ Է ՍՏԱՑԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ

Առաջարկվող նորություններ

29.10.2013ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏԻ ՀՐԱՎԵՐ

08.10.2013 ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵԱՆԱՁՎԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

03.10.2013ՀԻՎԱՆԴ ՄԱՐՄԻՆ

14.11.2013ԿԱՋՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })